կամ զայն, յայտ է թէ 'ի վերայ աւերակաց նորին շինեաց զայն վանքն ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Ագարակ արտաքոյ քաղաքին ։ Սարգիս և Մկրտիչ եպիսկոպոսունք ։ Յոյն պատմիչ . վէճ Բեթղեհէմի վանաց ։ Դեսպան Վրաց և վէճ նորա վասն Ս. Յակոբայ . և Գողգոթայի ։

ՂԱԶԱՐ անուն ումն որդի Ապատուլլահի որդւոյ Սէճայի Բերիացւոյ, միաբան Ս. Աթոռոյն Երուսաղէմի, սա գընեաց ագարակ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի 'ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի, զանուն տեղւոյն այնորիկ Արաբացիք կոչեն՝ Արտ էլ պաթա, և տնկեաց անդ այգի, և օրինօք դատարանի կտակեաց զայն լինել մի 'ի կալուածոց վանաց Ս. Յակոբայ. որպէս ցուցանէ մուրհակն գրեալ 'ի թուին ՋԵ (1456)։

Սակայն՝ այս և սմին նման այլ ագարակք և պարտէզք, 'ի փոփոխութենէ իշխանութեան ժամանակին և 'ի բռնութենէ Արաբացւոց՝ վերստին յափշտակեալ են, եւ այժմ չեն 'ի ձեռս Հայոց ։

Սարգիս եպիսկոպոս որդի Ապատուլլահի . սորա տեսեալ զվանս Ս. Յակոբայ իբրեւ զնաւ հողմակոծեալ և տատանեալ 'ի մէջ անկարգութեան և խռովութեան . զի յառաջագոյն ոմանք յանզգոյշ միաբանից հասեալ յիշխանութեան՝ առեալ էին զյոլով դրամս պարտեօք՝ ծանր տոկոսիւք . եդեալ 'ի գրաւի զկալուածս վանաց, զզգեստս և զսպասս եկեղեցւոյ . 'ի մեռանիլ կամ յանկանիլ յիշխանութենէ միոյն, ծանրանայր պարտքն 'ի վերայ յաջորդին, իբրեւ ոչ կամէր ճանաչել եւ յանձն առնուլ զվճարումն նոցա, ծագէին վէճք և խռովութիւնք . կագէին և կռուէին միաբանք ընդ նախագահի իւրեանց, և 'ի սաստկանալ աղմկին՝ ըմբոստացեալ դրամատեարց զգրաւսն հանէին 'ի վաճառ ։ Իսկ Սարգիս եպիսկոպոս խնամ կալաւ դարմանել զիրս և բառնալ 'ի միջոյ զայնպիսի գարշելի անկարգութիւնս, որ նախատինք էին ազգին . ուղղեաց հար-